ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

«ՏԿԵՆ-ԷԱՃԾՁԲ-26/8» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ

մեկնարկ՝ 24.12.2025թ.
ժամը 16:30
ավարտ՝ 05.01.2026թ.
ժամը 17:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության պետ (հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ)	Պապին Գալստյան

Հանձնաժողովի անդամներ՝

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի պետ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)	Արայիկ Ստեփանյան
Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ֆինանսական, հաշվապահական հաշվառման և համայնքային բյուջեների վարչության գլխավոր մասնագետ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)	Աննա Մելիքսեթյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գնումների համակարգման և կազմատնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի քարտուղար՝ ԳՊ/ՄՀՄ)	Լուսինե Աբովյան

«ՏԿԵՆ-ԷԱՃԾՁԲ-26/8» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) հայտերի գնահատման նիստի օրակարգը

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների վերաբերյալ:
2. Տեղեկատվություն Armeps (eauction.armeps.am) էլեկտրոնային համակարգում հայտերի ներկայացման վերաբերյալ:
3. Ընթացակարգին էլեկտրոնային հայտ ներկայացրած յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին:
4. Տվյալներ՝ հակադարձ աճուրդում հաղթող ճանաչված մասնակիցների հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին:
5. Տեղեկատվություն՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումների, հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:
6. Ընթացակարգի հանձնաժողովի գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին:

1. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի

նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գնման գինը:

Չափաբաժնի			Գնման առարկայի համառոտ նկարագրությունը
համարը	գնման գինը	անվանումը	
1	**1 000 000**	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն	Հայաստանի Հանրապետության միջպետական բեռնափոխադրումների և ՌԴ ոչ կանոնավոր փոխադրումների իրականացման մեկանգամյա թույլտվության փաստաթղթերի տպագրության ծառայություններ

2.Տեղեկատվություն Armeps (eauction.armeps.am) էլեկտրոնային համակարգում հայտերի ներկայացման վերաբերյալ

2.1 Ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետ էր սահմանվել 2025 թվականի դեկտեմբերի 23-ը ժամը 15^{00}-ը, հակադարձ աճուրդը մեկնարկել է 2025 թվականի դեկտեմբերի 24-ին ժամը 15^{00}-ին:

2.2 Սահմանված կարգով ներկայացված մասնակիցների հայտերը, որոնք ընդունվել են eauction.armeps.am էլեկտրոնային համակարգի կողմից 3-ն են:

2.3 Ընթացակարգի շրջանակում հայտ են ներկայացրել հետևյալ մասնակցները.

№	Մասնակցի անվանումը	Գործունեության հասցեն	ՀՎՀՀ	Մասնակիցների էլեկտրոնային փոստի հասցե, հեռախոս
1	«Մոնոպրինտ» ՍՊԸ	ՀՀ ք.Երևան, Մալաթիա-Սեբաստիա Անդրանիկի փ 96 8բն.	**01844711**	monoprint1@mail.ru Հեռ. +374 91 402 586
2	«ՀԻՊՈԿՐԱՏ ԴԵՆՏ» ՍՊԸ	ՀՀ կոտայքի մարզ Ձորաղբյուր 2224 Ջրվեժ Այգետարածք 4/115	**03584501**	hippocrates0109@gmail.com Հեռ. +374 99 966 646
3	Արփինե Բեգլարյան ԱՁ	ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Եղվարդ, Զովունի 11փ. 81շ. բն.4	**43274098**	beglaryanprint@mail.ru Հեռ. +374 41 062 278

3. Տվյալներ՝ Ընթացակարգին էլեկտրոնային հայտ ներկայացրած յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին

Չափաբաժնի համար	Հերթական տեղ	Մասնակցի անվանումը	Նախա-հաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջնական առաջարկ		
				գինը առանց ԱԱՀ	ԱԱՀ	ընդհանուր գինը	գինը առանց ԱԱՀ	ԱԱՀ	ընդհանուր գինը
1	1	**«Մոնոպրինտ» ՍՊԸ**	1000000	**833332**	**20%**	**999998.4**	**833332**	**20%**	**999998.40**
	2	Արփինե Բեգլարյան ԱՁ (մերժված)		1100000	0%	1100000	1100000	0%	1100000
	3	«ՀԻՊՈԿՐԱՏ ԴԵՆՏ» ՍՊԸ (մերժված)		25000000	20%	30000000	25000000	20%	30000000

4. Տվյալներ՝ հակադարձ աճուրդում հաղթող ճանաչված մասնակիցների հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին

4.1 Ընթացակարգի հակադարձ աճուրդի արդյունքում 1-ին չափաբաժնի հաղթող մասնակից է ճանաչվել՝ **«Մոնոպրինտ» ՍՊԸ-ն:**

4.2 Հակադարձ աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթեր առկա են և համապատասխանում են Ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

5. Տեղեկատվություն՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումների, հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

5.1 Օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

5.2 Սույն ընթացակարգի վերաբերյալ հիմնավորումներ չեն տրվել:

6. Ընթացակարգի հանձնաժողովի գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին:

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

6.1 Ընթացակարգի 1-ին չափաբաժնի ընտրված մասնակից ճանաչել՝ **«Մոնոպրինտ» ՍՊԸ-ին**

6.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝ անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:

6.3 Ընթացակարգի ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0

Հանձնաժողովի անդամների ստորագրությունները՝

Հանձնաժողովի նախագահ՝	**Պ. Գալստյան**	.....
Հանձնաժողովի անդամներ՝	**Ա. Ստեփանյան**	.....
	Ա. Մելիքսեթյան	.....
Քարտուղար՝	**Լ. Աբովյան**	.....